

ԵՐԲ ԶԱՆԱՊԱՐՀԸ ՏԱՆՈՒՄ Է ՓԱԿՈՒՂԻ

Վ. Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԽՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը լույս է բն-
ծայել ականավոր գրող և ուսումնասիրող Ակսել Բակունցի երկերի առաջին
գիտական հրատարակությունը, որի վերջին՝ չորրորդ, հատորում¹ տեղ է գտել
նրա «Խաչատուր Արուսյանի «Անհայտ բացակայումը» արխիվային նոր վա-
վերագրերի և անհայտ նամակների հիման վրա» հետազոտությունը: Ինտալին
անգամ այն լույս է տեսել Երևանում, 1932 թ.:

Հայտնի է, որ 1920-ական թվականների վերջերին ստալինյան բռնա-
կալության պատճառով ստեղծված գիտական մթնոլորտն այնպիսին էր, որ
մեր անցյալի գործիչներին, այդ թվում նաև Արուսյանին, անհնար էր ըստ
արժանիքների գնահատել: Դրա համար էլ Արուսյանը ներկայացվում էր որ-
պես «չափազանց գահասեր, հլու հնազանդ տիրող օրենքներին և գոյություն
ունեցող կառավարության ձեռքին»², այդ պատճառով էլ նրա «ստեղծագոր-
ծության գաղափարական բովանդակության մեջ ժառանգելի տարրեր» չկան³:
Անգամ Արուսյանի արձանի բացման արարողության ժամանակ Հայաստանի
գրողների միության նախագահը շեշտում էր, թե «մերը չէ այն Արուսյանը,
որն ազգի փրկությունը տեսնում էր ուսաց կայսրի գահի և նրան ծառայող
Ասլան Բալասի Աղասիների հեթաթային քաջագործությունների մեջ ... մերը
չէ այն Արուսյանը, որը թեպետ տեսավ ու նկատեց մասսաների ճնշումը, բայց
երբեք չդարձավ հեղափոխական»⁴: Այդ բոլորը բերում էր այն եզրակացու-
թյան, թե քանի որ Արուսյանը չի ժխտել ցարական կառավարման համակար-
գը, ապա նրա անհայտացումը չի կարելի «քաղաքական ակտ» համարել:

Արուսյանի գնահատման համար այդ աննպաստ մթնոլորտում Բակունցը
միտք է հղանում նրա մասին պատմավեպ գրելու: Բայց պատմավեպի շարա-
դրման ընթացքում համոզվելով, որ առանց մեծ գրողի անհայտացման
հանգամանքները պարզաբանելու դա անհնար է, տաղանդի իր բնազդով նա
դիմում է արխիվներին, այնտեղ ուսումնասիրություններ կատարում և, դրանց
արդյունքներն ավելի կարևոր համարելով, առանձին գրքով հրատարակում է,
միևնույն պատմավեպը մնում է անավարտ:

Բակունցի խիզախ և աննախադեպ գիրքը հայ մտավորականության շըր-
ջաններում լայն արձագանք է գտնում: Հաջորդ՝ 1933 թ. լույս է տեսնում նրա
գրքի քննադատությանն ուղղված պատմաբան-բանասեր Աշոտ Հովհաննիս-
յանի «Արուսյան» գիրքը, իսկ 1934 թ. Մոսկվայում (ռուսերեն)՝ Վաղարշակ
Տեր-Վազանյանի «Խաչատուր Արուսյան» երկը: Անշուշտ, որպես առաջին
փորձ, Արուսյանի անհայտացմանը նվիրված Բակունցի գիրքը խոցելի կողմեր
ունի, որոնք էլ քննադատում է Ա. Հովհաննիսյանը: Բայց, կարևորն այն է,
որ և վերջինս, և Վ. Տեր-Վազանյանը բարձր են գնահատում Բակունցի
ուսումնասիրությունը, որն ըստ էության հակադրվում էր առկա մտալու-
թյանն ու գոհարկ սոցիոլոգիզմի կողմնակիցներին: Մասնավորապես Ա. Հով-
հաննիսյանը գրում է, թե Արուսյանը «հայտնվում է այստեղ որպես մեկը, որն
անդրադարձնում է գյուղացիության հակակրանքը ցարիզմին ու բուրժուա-

¹ Ա. Բակունց, Երկեր, հ. 4, Երևան, 1984:

² Ե. Շահադիդ, Խ. Արուսյան (Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի,
1926, № 3, էջ 160):

³ Դր. Սիմոնյան, Խ. Արուսյանի արձանի բացման առիթով (Գրական թերթ, 13. VII.
1933):

⁴ Ե. Զուբար, Խ. Արուսյանի արձանի բացումը (Գրական թերթ, 13. VII. 1933):

գիային, երես շուտ տալիս տիրող ռեժիմին և տիրող հասարակարգին, անցնում Արաքսը, ապավինում հայկական բնաշխարհում երկրագործական շարքա՝ աշխատանքով ապրող մասսայի բախտին կամ, ով գիտե, հենց նույն ժամանակ, 1848 թ. գարնանը Նվրոպայում բռնված հեղափոխության հուսակայանին։ Վերագնահատումը կատարյալ է իրոք։ Այդ տեսակետից է հենց, որ ընկ. Ակսելի կոնցեպցիան թե՛ նոր է, թե՛ խիզախ, թե՛ հետաքրքրական միանգամայն։ Բայց որքա՞ն հիմնավոր է այն։ Այս է խնդիրը⁵։ Իսկ Վ. Տեր-Վազանյանը, Բակունցի երկը գնահատելով հանդերձ, տողատակում հայ մտավորականությանը կոչ է անում Արովյանի հետքերը փնտրել Սիբիրի արխիվներում և Բանտային կենտրոնական վարչության գործերում⁶, որը որոշակի ակնարկ է այն մասին, որ Արովյանը ոչ թե Ռուսաստանից հեռացել է, ինչպես կարծում է Բակունցը, այլ Սիբիրում քաղաքական արքայական է եղել։ Բակունցի հիմնական սխալն այն է, որ նա ծանոթ է եղել միայն «անհատ բացակայում» իրավաբանական տերմինի արխիվային փաստին։ Այսպես, իա գրում է. «Ցարական ադմինիստրացիայի պաշտոնական գրագրությունների մեջ «անհատ բացակայող» կամ «անհատ բացակայության մեջ գտնվող» են կոչվում նրանք, որոնց մասին հաստատ տեղեկություն ունեն, թե անվտանգ անցել են սահմանը և ապրում են ռուսական կայսրության սահմաններից դուրս։ Իսկ մենք տեսանք, որ մինչև վերջ, պաշտոնական թղթերում, Արովյանին համարում էին «անհատ բացակայող»⁷։

Պարզ է, որ եթե Բակունցին հայտնի լիներ նաև օրենսդրական աղբյուրը, ապա կիմանար, որ Կացության օրենսգրքի 7-րդ հոդվածի առաջին մասով «անհատ բացակայող» են համարվում կայսրության ներսում գտնվող վարչականորեն գաղտնի արքայականները, իսկ երկրորդ մասով՝ կայսրությունից փախած վտարանդիները⁸։ Բոլոր դեպքերում Բակունցն ու Վ. Տեր-Վազանյանը կանգնած էին Արովյանի «անհատ բացակայումը» պարզաբանելու և նրա վախճանի հանդամանքները լուսաբանելու առաջ... եթե ստալինյան բռնություններին զոհ չդառնային։

Համենայն դեպս անկասկած է, որ Բակունցի գրքով սկսված բանավեճով փաստորեն ստեղծվում են արովյանագիտության գիտական հիմք հանդիսացող երեք աշխատություններ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքն ու արդիականությունը և վերականգնումն այս օրերին մեծապես նպաստում են վերականգնելու բռնության ու լճացման տարիներին խեղաթյուրված պատմական իսկությունը և մաքրելու գիտության մեջ տեղ գտած անառողջ մթնոլորտը։

Բակունցից հետո ընկած կես դարից ավելի ժամանակաշրջանում հրատարակվում են Արովյանի «Երկերի լիակատար ժողովածուի» տաս հատորները, նրա Դիվանի երկու հատորները, ընդլայնվում են արովյանագիտության աղբյուրագիտական հիմքերը, հայ խորհրդային արովյանագետների (Ա. Տերտերյան, Ն. Շահադիզ, Ա. Հովհաննիսյան, Վ. Պարտիզունի, Մ. Սանթրոսյան, Հ. Մուրադյան, Ս. Բադյան, Ն. Մուրադյան, Ս. Սարինյան և շատերի) ուսումնասիրություններով արովյանագիտությունը մեծ առաջադիմություն է ունենում։

Հասկանալի է, որ նա, ով ձեռնարկում է Արովյանի մասին գրված որևէ գործ (էլ չենք ասում՝ ուսումնասիրություն) ծանոթագրելու, ապա նա գիտական և բարոյական տեսակետից պարտավոր է այն գնահատել արովյանագիտության ձեռք բերած արդի մակարդակի չափանիշներով։ Իսկ ինչպե՞ս է վարվում Բակունցի Երկերի գիտական հրատարակության շորրորդ հատորի բնագիրը կազմող, պատրաստող, ծանոթագրող և խմբագիր Պիոն Հակոբ-

⁵ Ա. Հովհաննիսյան, Արովյան, Երևան, 1933, էջ 2։

⁶ В. Ваганян, Хачатур Абовян, М., 1934, с. 276.

⁷ Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 85։

⁸ Свод законов Российской империи (այսուհետև՝ СЗРП), т. 9, Законы о состоянии, СПб., 1842 статья 7.

յանը: Բակունցի երկի ծանոթագրությունների առաջաբանում Գ. Հակոբյանը գրում է. «Մենք հարկ չենք գտնում զբաղվելու Բակունցի վարկածի վերաբերյալ, քանի որ ժամանակն արդեն կայացրել է իր վճիռը, և այն է՝ ոչ չօգուտ առաջադրողի»⁹: Բայց չէ՞ որ հենց դա է ծանոթագրողի հիմնական պարտականությունը, քանի որ հասարակ բացատրական բառարանն անգամ բացատրում է, թե «Ծանոթագրել» նշանակում է «Որևէ գրվածքի մեջ շոշափված հարցերի՝ արտահայտված մտքերի և այլնի մասին անհրաժեշտ բացատրություններ, մեկնաբանություններ և ծանոթագրություններ գրել»¹⁰: Սակայն պարզվում է, որ դա լոկ Բակունցի «վարկածի» նկատմամբ ընթերցողների մեջ կասկած հարուցելու նպատակով արված հայտարարություն է, որովհետև Հակոբյանն անդրադառնում է Բակունցի առաջադրած՝ Արուսյանի «անհայտ բացակայմանը» և տալիս հետևյալ ծանոթագրությունը. «Անհայտ բացակայող» կամ «Անհայտ բացակայություն» եզրույթը իրավաբանական լեզվով նշանակում է մի մարդ, որի ո՞ւր և ի՞նչ լինելը (մեռած կամ կենդանի) անհնար է հետաքննության միջոցներով պարզել: Մարդը կար ու հիմա չկա և ոչ ոք չի կարող հաստատել՝ ե՞րբ և ո՞ւր է գնացել և ի՞նչ է եղել այնուհետև: Վերջին տարիներս տարածվում է մի անհիմն կարծիք. թե, իբր, ցարական Ռուսաստանում այդպես են կոչել գաղտնի Սիբիր քստորվածներին, և այդ առիթով փոխանակված բոլոր գրագրություններն ու հետքերը դիտավորյալ ոչնչացնում էին: Սա, իհարկե, արտառոց «մեկնություն» է կամ «փաստերի գիտակցված աղավաղում»¹¹: Ի՞նչ է սա. գիտական ուսումնասիրության վերանազարի ու բովանդակության հիմնաքար «անհայտ բացակայում» իրավաբանական տերմինին «բացատրություն» է տրվում, բայց օրենսդրական հիմքերը չկան, դատապարտվում են «վերջերս տարածված անհիմն կարծիքն ու փաստերի գիտակցված աղավաղումը», սակայն հեղինակի անունն ու աղբյուրը չեն տրվում:

Տարիներ առաջ Հակոբյանն իր հայտարարությունները հիմնավորելու համար վկայակոչում էր ոչ միայն Արուսյանի օրոք գործող օրենսդրական աղբյուրները, այլև հականե-հանվանե նշում էր նաև հեղինակին և իր դժգոհությունը հայտնում առանձին հրատարակչություններից, որ իրեն համամիտ չեն: Մի առիթով նա տողատակում գրում է. «Արուսյանի անհայտացման վարկածի լուծման վերջին, ձախող փորձին անդրադարձել ենք հատուկ հոդվածով (տե՛ս «Լրագր», 1977, № 5, «Արուսյանի անհայտացման հին վարկածի նոր «մեկնաբանումը») ու ցույց տվել, որ դա գիտության հետ ընդհանուր ոչինչ չունի: Հիմա էլ այդ կարծիքին ենք: Ակադեմիայի հրատարակչամբողջից հետո, 1979 թ., լույս է ընծայվել վարկածի արծարծողներից մեկի՝ Վ. Ղազարյանի գիրքը, որի մեջ կրկնվում են նույն տեսակետներն ու խեղաթյուրված փաստերը՝ առավել չափազանցված: Այժմ էլ Արուսյանը ներկայացվում է որպես քստորական և 1853 թ. դեռ կենդանի, Սիբիրում կամ այլուր ուսուցչությամբ պարապող անձնավորություն (բայց թե ո՞ւր, չի ասվում): Սա միամիտ լեզվով է: Այսօրինակ փորձերը միայն ապակողմնորոշում են անտեղյակ ընթերցողներին»¹²: Օրինական հարց է ծագում՝ գիտական աշխատողին ավելի պատշաճ չէ՞ բացահայտ գրախոսությամբ հանդես գալը, քան թե այս ու այն տողատակերում հայտարարություններ տալը: Մի՞թե հայտարարությամբ գիտություն է ստեղծվում կամ ժխտվում:

9 Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 540:

10 Տե՛ս է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա—2, Երևան, 1976, էջ 633, 634:

11 Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 563, ծան. 135:

12 Գ. Հակոբյան, Արուսյանը և Ռուսաստանը (ՀՍՍՀ ԳԱ Լրագր, 1980, № 6, էջ 17): նման ձևակերպումներ տե՛ս նաև նույնի՝ Խ. Արուսյանը և նրա «վերջ» Հայաստանին (Խ. Արուսյան, Վերջ Հայաստանի, Երևան, 1981, էջ 10), Յուզյանի՝ Խ. Աբովյանի (связь армянской литературы с литературой народов СССР, Ереван, 1982, выпуск 2, с. 133) և այլն: Բոլորը՝ տողատակերում:

Հակոբյանն իր տրամադրության տակ ունի նաև մեկ այլ միջոց՝ հրապարակ հանել Աբովյանի կենսագրությանը նվիրած իր «Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը, ժամանակը» մենագրության՝ գրողի հիմնական գործունեությունը ընդգրկող շարունակությունը, որի սկիզբը նա լույս է ընծայել սրանից 22 տարի առաջ՝ 1967 թ.։ Բայց ամբողջ խնդիրն այն է, որ նա ի վիճակի է այդ շարունակությունը հրապարակ հանելու, քանի որ իր առաջին գրքում Աբովյանին ներկայացնելու Հակոբյանի ուղենիշը ոչ թե արովյանագիտության՝ 1960-ական թվականներին հասած մակարդակն է, այլ, «անցյալ գարու 90-ական թվականներին», ավելի ստույգ՝ ներսես քահանա Տեր-Կարապետյանի ճամարանական դիսերտացիայում տեղ գտած, այսպես կոչված, «թուրքի ձեռքով սպանություն» անհիմն վարկածը¹³, որը և նրան փակուղու մեջ է գցել։

Ահա, այդ փակուղուց էլ դուրս գալու համար Հակոբյանը քաղության նոխալ է դարձնում նախ Աբովյանին, ապա նրա «Վերք Հայաստանին», հետո՝ Զորություն կրոնի, թուրքի աղչիկը՝ երկը, և հերթը հասնում է Ակսել Բակունցին։ Հակոբյանը, «մոռանալով» Աբովյանին տված դեմոկրատ և նույնիսկ հեղափոխական-դեմոկրատ իր նախկին որակումները¹⁴ (երբ Աբովյանը երկու անգամ հրաժարվել էր դպրոցի համար ցարի նկարը գնելու իր պետիկադադրությունը կատարելուց, իսկ «դա այնպիսի մի հանդգնություն էր, որը չէր կարող վրիպել բարձր իշխանության ուղադրությունից»¹⁵), հետագայում նրան դարձնում է միապետական¹⁶։ Այդ հիմքի վրա էլ 1972 թ. ծավալուն հուլիսածով Հակոբյանի խիստ քննադատում է «Հայաստան» հրատարակչությանը այն բանի համար, որ 1971 թ. ռուսերեն հրատարակված «Վերքի» հանձնարարականում դրվել է, թե «Ստեղծագործության ռոմանտիկ պաթետիկայի և տևում կենցաղային դետալների ու մանրամասնությունների միջով ցայտունորեն երևում է գլխավոր միտքը՝ Աբովյանի սրբազան պատգամը հայ ժողովրդի ճակատագրի անբաժանելիությունը Ռուսաստանի հեղափոխական ճակատագրից»¹⁷։ Եվ ահա, մի քանի տարի անց Հակոբյանը «խմբագրում» է Ս.Շերվինսկու թարգմանած նույն ռուսերեն «Վերք Հայաստանին», իսկ 5 տարի հետո հրապարակ հանում նույն վեպի հայերեն «խմբագրումը»։ Ըստ որում, թեև վերջինիս առաջաբանում Հակոբյանը հավաստում է, թե «Հակոբյանն այն է, որ սյուն հրատարակության մեջ աշխատասիրողը (իմա՝ Պ. Հակոբյանը—Վ. Ղ.) հավատարիմ է մնացել հեղինակի կամքին»¹⁸, բայց նա ամեն ինչ անում է Աբովյանի կամքին հակառակ։ Այսպես, Աղասուն նվիրած երգում Աբովյանը սեագրից խմբագրում և 6 տողանոց երգը մաքրագրում, դարձնում է հինգ տող, իսկ Հակոբյանը «խմբագրելով» Աբովյանին, վերականգնում է սեագրի վիճ տողերը։ Բացի այդ, Աբովյանն իր պատմավեպը շարադրել է արձակով։ Հակոբյանը, հակառակ հեղինակի կամքի, տասնյակ էջեր վեր է ածում չափածոյի¹⁹։ Արդեն իսկ այս փաստերը դասական գրողի երկի հրատարակման տեքստաբանական կանոնների կոպիտ խախ-

¹³ Տե՛ս Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը, ժամանակը (1809—1836), Երևան, 1967, էջ 6, նույնի՝ X. Абовян, жизнь, творчество, время (1809—1836) (авторсферат докт. диссертации, Ереван, 1968, с. 6)։

¹⁴ Տե՛ս Պ. Հակոբյան, Խ. Աբովյանը և ռուսական առաջավոր կուլտուրան (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1952, № 5, էջ 34), Գրական թերթ, 7. XI. 1954։

¹⁵ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1955, № 2, էջ 69, Սովետական Հայաստան, 12. IX. 1953։

¹⁶ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր, 1973, № 4, էջ 31։

¹⁷ Գրական թերթ, 11. II. 1972։

¹⁸ Խ. Աբովյան, Եղվ. աշխ., էջ 35։

¹⁹ Հմմտ. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), Է. 3, Երևան, 1948, էջ 28, 98—99, 102—103, 117—119, 159—160, 198—199 և Խ. Աբովյան, Եղվ. աշխ., էջ 77—78, 173—176, 181—183, 202—206, 261, 313—315։

տում են, որ թույլ է տվել Գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի վարիչ Պ. Հակոբյանը և հավաստել, թե ինքը «հավատարիմ է մնացել հեղինակի կամքին»։ Բայց, ո՞րն է տեքստաբանական այդ ավերածության նպատակը։ Սոսկ այն, որ ի տարբերություն վեպի նախորդ տասը հրատարակությունների, իր «խմբագրածին» կցի 35 էջանոց «Խ. Աբովյանը և նրա «Վերք Հայաստանին» վերնագրով առաջաբան և նույնքան էլ «ծանոթագրություններ», որպեսզի արդարացնի Աբովյանի «գիտական կենսագրության» շարունակությունը չհրատարակելու տխուր փաստը։

Ահա այս առաջաբանում է, որ Հակոբյանը, Աբովյանի կենսագրությունը սեղմելով շորս էջերի մեջ, ավարտում է նրանով, որ Աբովյանը «1848 թ. գարնանը... զոհ է դառնում խավար ուժերի և մոլեգնած կրքերի»²⁰։ Դրանով էլ նա մի կողմ է նետում Ա. Բակունցի, Ա. Հովհաննիսյանի, Վ. Տեր-Վահանյանի և նրանցից հետո եկող հայ խորհրդային աբովյանագետների արժեքավոր ուսումնասիրությունները և չափանիշ ընդունում ներսես քահանա Տեր-Վարապետյանի ճեմարանական դիսերտացիայի՝ մեր նշած վարկածը։

Իսկ թե խոսքը ինչ «մոլեգնած կրքերի» մասին է, Հակոբյանը պարզաբանում է իր հաջորդելությունը։ Այստեղ էլ նրա հերթական քավության նոխազն է դառնում Աբովյանի «Զորություն կրոնի» երկը, որի խոր փիլիսոփայական և հակակրոնական բովանդակության գրաքննական նկատառումը հաշվի առնելով, հեղինակը տալիս է նաև «Թուրքի աղչիկը» ենթավերնագրեր։ Այդ երկը Աբովյանը գրել է 1839 թ.՝ իր կյանքի ամենադժվար տարին, երբ «նախաշավիղի» ապօրինի հրատարակման փորձի կապակցությամբ կենտրոնական ու տեղական իշխանություններն իրար էին անցել, և նա կանգնած էր իրական աքսորման վտանգի առաջ, որից նա փրկվում է միայն այն պատճառով, որ հեռու չէր ստացել դրան նախորդող՝ օրենքով սահմանված վարչական մյուս տույժերը²¹։

Հակոբյանը, փաստարկ դարձնելով երկի «Թուրքի աղչիկը» ենթավերնագրերը, դրա գրվելու տարեթիվը ինքն տարով հետ է գցում և երկում նկարագրված դեպքերը տեղափոխում Երևան ու Աբովյանին ներկայացնում կրքերից խելագարվածի դերում, որին էլ այդ հողի վրա թուրքերը սպանում են։

Ահա սրանից հետո է Հակոբյանը իր հերթական քավության նոխազր դարձնում Ա. Բակունցի «խաշատուր Աբովյանի «Անհայտ բացակայումը» հետադոտությունը։

Բակունցը գրում է, թե Աբովյանի «կյանքի, հատկապես անհայտացման մասին հարյուրից ավելի ուսումնասիրություններ, գրքեր և հոդվածներ են գրել», որով ցանկանում է ասել, թե շատ է գրվել։ Հակոբյանը երկի հենց առաջին ծանոթագրության մեջ փոխանակ այդպես էլ բացատրելու, հետևյալ ծանոթագրությունն է տալիս. «Մինչև 1932 թ. Աբովյանի մասին գրվել ու հրատարակվել է ընդամենը 10 գրքուկ, բոլորն էլ փոքրածավալ, որոնց մեջ, փաստական նյութի ընդգրկման առումով՝ արժեքավոր է միայն Ն. Տեր-Վարապետյանի աշխատությունը (Տփղիս, 1897), իսկ Աբովյանի անհայտացման վաղեմաների վերաբերյալ հատուկ գիրք կամ հոդված առհասարակ չի գրվել»²²։ Այստեղ Հակոբյանը, նախ, կասկածի տակ է առնում Բակունցի անաչառությունը, ապա և՛ ընթերցողներին կողմնակիորեն տրամադրում է, որ Բակունցի երկի ծանոթագրման իր չափանիշը ոչ թե աբովյանագիտության ձեռք բերած 1984 թ. մակարդակն է, այլ դրանից 87 տարի առաջ, Տփղիսում հրատարակված Ն. Տեր-Վարապետյանի փոքրիկ, բայց «արժեքավոր» գրքուկը։ Հակոբյանն անգամ չի նկատում, որ իր «ծանոթագրությունը» հենց իր դեմ է։ Ի՞նչ «Աբովյանի անհայտացման վարկածների վերաբերյալ հատուկ գրքուկ կամ հոդված առհասարակ չի գրվել», ապա ինչպե՞ս հավա-

²⁰ Խ. Աբովյան, նշվ. աշխ., էջ 10։

²¹ Մանրամասնությունները տե՛ս Վ. Ղազարյան, Խաշատուր Աբովյանի «Գործը» (Բանբեր Հայաստանի արխիվների, 1974, № 3, էջ 39—74)։

²² Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 540, ծան. 1։

սուանք նրա այն պնդմանը, թե «Մենք հարկ չենք գտնում զբաղվելու Բակունցի վարկածի վերաբերմամբ, քանի որ ժամանակն արդեն կայացրել է իր վճիռը, և այն էլ՝ ոչ հագուտ առաջագործի»։ Ստացվում է, որ ժամանակն ինքն իրեն վճռել է, բայց ոչ մի մարդ չի իմացել այդ մասին։ Իբր դա քիչ է, Հակոբյանը արունակում է. «Արևիկյանի մահվան առեղծվածը այսօր էլ խորհրդավոր է, ինչպես և 135 տարի առաջ, չնայած որ քննվել ու մերժվել են հայտնի վարկածներից մի քանիսը, նրանց մեջ և Արևիկյանի արտասահման անցնելու և Սիրիա արքայական լինելու ենթադրությունները»²³։ Այս անգամ էլ ստացվում է, որ, թեև «Արևիկյանի անհայտացման վարկածների վերաբերյալ» առհասարակ ոչինչ չի գրվել, բայց օգուտ «քննվել ու մերժվել են հայտնի վարկածներից մի քանիսը, նրանց մեջ նաև Արևիկյանի արտասահման անցնելու և Սիրիա արքայական լինելու ենթադրությունները»։ Բայց չէ՞ որ դա անհեթեթություն է։ Հեղինակը պետք է ցույց տար, թե ով, երբ և որտեղ է քննել ու մերժել։

Եվ, այսպես, Արևիկյանի «անհայտ բացակայման» մասին Բակունցի լրբաբան ուսումնասիրության ծանոթագրությունները Հակոբյանը սկսում է սրահից-նրանից լսած, բայց այժմ հանգուցյալ մարդկանց վկայություններով։ Օրինակ, նա գրում է. «Երևանյան թերթերն ու ամսագրերը առժամանակ լուրջում են պահպանում Բակունցի գրքի մասին, իսկ գրական-գիտական շրջանների ընդհանուր կարծիքն այն էր, որ Բակունցը Արևիկյանի մահվան առեղծվածը լուծելիս՝ վրիպել է։ 1933 թ. Գրողների միության երկկուլթնիների մեկի ժամանակ այդ առթիվ զեկուցում է կարդում հայտնի իրավաբան Գրիգոր Զուբարը, և «հզորապես հերքում» «անհայտ բացակայում» արտասահմանում Բակունցի տված մեկնաբանությունը։ Այդ զեկուցման բնագիրը... չենք հայտնաբերել։ Միակ ծանոթ վկայությունը տես «Անահիտ» (Փարիզ), 1933, № 1—2։ ...Անձնական զրուցի ժամանակ լսել ենք Գ. Զուբարից, որ իր կարծիքով՝ Արևիկյանի կորստյան վարկածներից ամենահավանականը ուրիշներից սպանված լինելն է, իսկ Բակունցի տված մեկնաբանությունը իրավաբանական ոչ մի հիմք չունի»²⁴։ Կամ՝ «Բակունցի... բարեկամներից մեկը՝ Թ. Գևորգյանը պատմել է մեզ. «Երբ լույս տեսավ (Բակունցի—Վ. Ղ.) գիրքը և կարդացի, հարցրի իրեն. «Ինչո՞ւ գրեցիր, չէ՞ որ սուտ է»։— Պատասխանեց. «Նրա համար, որ արձանը կանգնեցնեն»²⁵։ Բայց չէ՞ որ այդ ձևով կարելի է ամեն մի պատվավոր հանգուցյալի վարկաբեկել։ Գիտական լուրջ ուսումնասիրումը կամ ծանոթագրումը պահանջում են գրավոր հավաստված վկայություններ և ոչ թե ամեն մի նախադասության մեջ բացահայտ անձ տվածներ կատարող հեղինակի հայտարարություններ։ Իսկ ու Հակոբյանը անճշտություններ թույլ տվող հեղինակ է, ապացուցում է հետևյալը՝ 5-րդ, 31-րդ և 76-րդ ծանոթագրություններում նա հավաստում է, որ Արևիկյանը Ասատուր անունով ծառա չի ունեցել, դա Ա.-Դո-յի (Հովհաննես Գրիգորի Տեր-Մարտիրոսյանի) գյուտն է, քանի որ Ասատուրը անգո անձ է։ Մինչդեռ Երևանի գավառական ուսումնարանի դրամարկղային մատյանի 1848 թ. մարտի 25-ի էջում պարզ գրված է. «Շենքի պահպանության գումարից ուսումնարանի պահակ Ասատուր Օվանեսովին մարտ ամսվա համար ուճիկ տալ ութ ռուբլի արծաթ։ Ութ մանեթ արծաթ ըստացա Ասատուր Օվանեսով, նա գիր չգետեր ինդրանոր նորին գրեցի Պետրոս Առաքելովս»²⁶։ Նշանակում է, Ասատուրը ոչ թե «անգո», այլ Պետրոս Առաքելյանից վկայված և արխիվային վավերագրերով հավաստված իրական անձ է։ Պարզապես Հակոբյանին ձեռնտու չէ, որ Ասատուրը իրական անձ լինի, որովհետև Ա.-Դո-ն վկայում է, որ նա ասել է, թե. «Մենք մնացել էինք զարմացած, իմ աղեն քաղա-

²³ Նույն տեղում, 540։

²⁴ Նույն տեղում, էջ 534—535։


²⁵ Նույն տեղում, էջ 537։

²⁶ ՀԽՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՊԿԱ), ֆ. 1, ց. 1, գ. 270, ք. 7։

քում հայտնի մարդ էր, նա ոտով-գլխով կորել էր, բայց պոլիցիան չէր գտնիս, չէր հետաքրքրվում, ինձ ու խանութիս չէր նեղում ու հարց ու փորձ անում, մի անգամ միայն մի պրիստավ եկավ, մի երկու բան հարցրեց խանութիցս ու թողեց գնաց: Սրան Ա-Դոն ավելացնում է. «Այս խոսքերը խորը ակսոսանքի շեշտով շարունակ կրկնելիս է եղել սպահանցի Ասատուրը՝ մի ծերունի մարդ, որը Արովյանի Երևան գալու օրից մինչև անհայտանալը նրա տանու ծառան է եղել, որին Երևանում շատերն էին ճանաչում և որը 1910 թ. դեռևս կենդանի էր»²⁷:

Այսօր արդեն Արովյանի անհայտ բացակայումը ապացուցող բազմաթիվ վավերագրեր ցույց են տալիս ինչպես Ասատուրի, այնպես էլ նրան վկայապետող Ա-Դոնի ճշմարտացիությունն այն մասին, որ տեղի իշխանությունները Արովյանին չեն փնտրել, քանի որ նրանց հայտնի է եղել նրա աքսորման իրողությունը:

30-րդ ծանոթագրման մեջ Հակոբյանը գրում է. «Արովյանի անհայտացման մասին գալստագետ Բլավատսկու՝ փոխարքա Վորոնցովին ուղարկած գրությունը... թվագրված չէ: Մեզ հավանական է թվում ապրիլի 26-ը»²⁸: Որ իսկապես այդ գրությունը պարզ թվագրված է՝ «Ապրիլի 2-ին», ուստի Հակոբյանը բացահայտ անճշտության է գիմում (այս էլ քանիբորոգ անգամ), մենք ստիպված ենք ընթերցողներին հրամայել հրատարակված վավերագրի լուսանկարը (նկ. 1)²⁹:



Նկ. 1. Արովյանի «անհայտ բացակայումը» հավաստող Բլավատսկու հաղորդումը:

Ի դեպ, այդ նույնը հավաստում է նաև Ասատուրը, որի վկայությունը բերում է Ա-Դոն, իսկ սրանից էլ՝ Բակունցը: Բլավատսկու պաշտոնական հաղորդման և ակնատես Ասատուրի վկայության հիման վրա էլ Բակունցը գրում է, թե 1848 թ. մարտի 31-ից ապրիլի 2-ը Արովյանը փակվել է իր տանը: Հակոբյանը «ծանոթագրում» է. «Բակունցն իրավացի չէ, նա անտեսել է փաստերը: Մարտի 30—31-ի և ապրիլի 1-ի ցերեկները Արովյանն իր տանը չի փակվել, այդ օրերին նա ոռճիկ է բաժանել ուսուցիչներին, իսկ թուրքեստանովին հանձնել դպրոցական գործերը, այսինքն՝ արխիվի նյութերը»³⁰, նախ, իր տանը Արովյանի փակվելու հաղորդումը Բլավատսկուն է և ոչ թե Բակունցին: Հետո, դպրոցական գործերի մեջ միայն արխիվի նյութերը չեն մտնում, իսկ Արովյանին փոխարինող թուրքեստանովն էլ վկայում է, որ Արովյանը «միայն հասցրեց անցյալ տարվա մի քանի գործ հանձնել», որ նշանակում է, թե դպրոցական ամբողջ ունեցվածքը, դրամական հաշիվներն ու արխիվային նյութերը լրիվ չի հանձնել, որի պատճառով, ապրիլի 6-ին այդ բոլորը հանձնվում և ընդունվում է հատուկ հանձնաժողովի կողմից³¹:

Այս փաստերը Հակոբյանին վաղուց են հայտնի: Բայց, քանի որ Բակունցի առաջարկած՝ Արովյանի անհայտ բացակայման տեսակետն ապացու-

²⁷ Գործ, 1917, № 7—8, էջ 63.

²⁸ Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 545: Ընդգծումը մերն է.

²⁹ Акты кавказской археографической комиссии (АКАК), т. 10, Тифлис, 1985, с. 830.

³⁰ Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 543, ծան. 11:

³¹ ՏՃՍՀ ԶԳՎԱ, ֆ. 1, ց. 1, դ. 72, ք. 33, 47—59.

ցող գիտական փաստարկները խանգարում են այսպես կոչված թուրքի կողմից սպանվելու՝ ներսես քահանայից ժառանգած Հակոբյանի անհիմն վարկածին, ապա նա ամեն առիթով փորձում է հերքել Բակունցին, նրա անաշուկությունը կասկածի տակ առնել, ցույց տալ նրա կողմից փաստերի անտեսումը, չափազանցումը, միտումնավոր անճշտություններ թույլ տալը և այլն: Չէ՞ որ Բլավատսկու հաղորդումը նշանակում է, որ աքսորելուց առաջ իշխանությունները Արևմտյան երեքօրյա տնային կալանքի են ենթարկել: Իսկ դա հենց հիմքից ժխտում է «թուրքի ձեռքով սպանության» անհիմն վարկածը: Ահա թե որն է պատճառը, որ Հակոբյանը փոխարքային ուղարկած Բլավատսկու հաղորդման «Ապրիլի 2-ին» պարզ թվագրումը դարձնում է «Ապրիլի 26-ին», իսկ այդ հաղորդման բովանդակության մասին էլ պնդում է, թե՝ «Պաշտոնական հաղորդումներում... ոչ մի խոսք չկա, որ Արևմտյան անհայտնալուց առաջ, մոտ երեք օր սենյակից դուրս չի եկել...: Սա Բակունցի մասնավոր ենթադրությունն է»³²: Ավելին, նա Բակունցին մեղադրում է ինքն իրեն և պատմական իսկությունը հակասելու մեջ³³:

Իսկ թե իսկապես ո՞վ է ինքն իրեն և պատմական իսկությունը հակասում, կանգ կառնենք հետևյալ օրինակների վրա: Ի պատիվ Բակունցի նշենք, որ նա առանց այն նոր վավերագրերին տեղյակ լինելու, որոնք մեզ հաջողվեց հայտնաբերել ու Արևմտյան անհայտ բացակայումը բացահայտել³⁴, տաղանդի իր ուժով ստույգ կոհստում է, որ Արևմտյան անհայտացման գործում իրենց տխուր դերն են կատարել Երևանի գավառապետ Ն. Բլավատսկին և կաթողիկոս ներսես Աշտարակեցին:

Նախքան Բակունցի երկին անցնելը այդ երկու գործիչների մասին Հակոբյանը գրում է. «Բլավատսկի Նիկիֆոր Վասիլևիչ—իր գործունեության երևանյան տարիներին Արևմտյանը շատ հաճախ է շփվել Բլավատսկու հետ, ընդհարվել, հալածանքի ենթարկվել: 1846 թ. Բլավատսկին մատնողագիր է ուղարկել գլխավոր կառավարչին (պետք է լինի՝ Կովկասի փոխարքային—Վ. Ղ.)՝ Արևմտյանի ռազմական արարքների մասին: Արևմտյանի անհայտացումից հետո անգամ Բլավատսկին չի դադարել դավեր նյութել նրա ընտանիքի դեմ»³⁵: Միայն այն բանի համար, որ Բակունցը Բլավատսկուն համարում է Արևմտյանի հակառակորդը, Հակոբյանն իր չորս (8, 20, 129 և 133) ծանոթագրություններում Բակունցին մեղադրում է «անհայտորեն չափազանցության», «իրական հիմքեր չունենալու» մեջ և բացատրում. «1845 թ. գծությունից հետո, որի համար մեղավոր էին և՛ Արևմտյանը (—Վ. Ղ.), և՛ Բլավատսկին... 1847 թ. նրանք հաշտվել էին և մինչև անգամ միասին այցելել Անիի ավերակները...: Արևմտյանը Բլավատսկու մասին բարձր կարծիք է հայտնել և զրկատանքի խոսքեր ասել, մինչև անգամ փառաբանել»³⁶: Եվ որպեսզի այդ բարեկամությունն ավելի հավաստի դառնա, Հակոբյանը միտումով թաքցնում է Բլավատսկու մատնության պատճառով փոխարքայից Արևմտյանի ստացած խիստ նկատողության իսկությունը: Նա գրում է. «Գավառապետը բողոքում է փոխարքային, իսկ վերջինս էլ սահմանել է մի թեթև պատիժ՝ երեքօրյա տնային կալանք, որ Արևմտյանը կրել է 1846 թ. հուլիսի 15—17-ին: Համապատասխան վավերագրերը պահվում են ...ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 2222, թ. 17»³⁷: Մինչդեռ, այդ փաստաթղթում հստակ գրված է. «փոխարքան հրամայում է Ձեզ հայտարարել խիստ նկատողություն և երեք-

³² Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 562, ծան. 131:

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 538:

³⁴ Տե՛ս Վ. Ղաղարյան, Խ. Արևմտյանը «անհայտացումից հետո» (Գրական թերթ, 24-1X. 1976), նույնի՝ Խաչատուր Արևմտյան, Երևան, 1979, նույնի՝ Խ. Արևմտյանը 1848-ից 11 տարի հետո (Գրական թերթ, 21. I. 1983), նույնի՝ Խ. Արևմտյանի մահվան թվականը (Գիտություն և տեխնիկա, 1988, № 3, էջ 48—53):

³⁵ Ե՛ւթ, հ. 10, Երևան, 1961, էջ 414:

³⁶ Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 543, ծան. 8, էջ 563, ծան. 138:

³⁷ Նույն տեղում, էջ 564, ծան. 144:

օրյա տնային կալանք: Մի՞թե բռնապետական Ռուսաստանում փոխարքայից խիստ նկատողություն և երեքօրյա տնային կալանք ստանալը «մի թեթև պատիժ» է: Զէ՞ որ դա դատարանից դուրս՝ վարչական կարգով տրվող այն տույժն էր, որից հետո, 1848 թ. հունվարին, Արովյանին տալիս են նաև լրիվ կամ խստագույն նկատողություն³⁸, իսկ ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը, երեքօրյա տնային կալանքից հետո, դարձյալ վարչական կարգով, գաղտնի, նրան աքսորում կամ անհայտ բացակայող են համարում:

Այժմ Աշտարակեցու մասին, Նախքան Բակունցի երկը ծանոթագրելը Հակոբյանը գրում էր. «Ներսես Աշտարակեցի—1843 թ. ընտրվել է կաթողիկոս: Հետագա տարիներին հայաթել է հայ առաջադեմ գործիչներին, այդ թվում նաև Արովյանին, գործակցել հաճախ ցարիզմի հետ: Արովյանի և Աշտարակեցու փոխհարաբերությունների հարցը հատուկ ուսումնասիրության նյութ է: Ներսեսի քաղաքականությունից բացահայտ դժգոհ լինելով հանդերձ, Արովյանը երբեմն դիմել է նրա օգնությանը, շնայած մեծ մասամբ մերժողական կամ խուսափողական պատասխան է տվել նրան»³⁹: Իսկ երբ Բակունցի նշած հետքերով մեղ հաջողվեց գտնել Արովյանի անհայտացման գործում տխուր դեր կատարած Աշտարակեցու № 75 գրության հետքերը⁴⁰, Հակոբյանը գրեց. «Նոր «հայտնագործություն» ամենամեծ անակնկալը, Ներսես Աշտարակեցուն «գիմադեբծելու» անհասկանալի ձգտումն է: Նշան Մուրադյանը և Վ. Ղազարյանը՝ մոռացած խիղճ ու հոգի, դրում են, թե Աշտարակեցու կողմից Արովյանին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում աշխատանք տալը կանխամտածված կեղծիք է եղել, որպեսզի ցարիզմը կարողանար նրան գողանալ: ...Ինչպե՞ս կարելի է հեղտ ու հանգիստ մեղադրել մի մարդու, որը պաշտելի անձ էր հայ ժողովրդի և Արովյանի համար»⁴¹:

Թե ինչպես է հայ ժողովրդի գործիչներին ու Արովյանին հալածողն ու ցարիզմին գործակցողը գրչի մի հարվածով այդ ժողովրդի ու Արովյանի համար պաշտելի անձ դառնում, դա Հակոբյանի «գաղտնիքն» է, մեզ միայն հայտնի է պատմական այն իսկությունը, որ Աշտարակեցուն հղած 1847 թ. վերջին իր հայտնի նամակում Արովյանը գրում է. «...ազգի այսպիսի տարաբախտության կարեկցիա մնում է միայն արձակ-համարձակ ասել, թե խաբված ակնկալությունը և հույսը, ավելի ևս սուր, քան ամերիկացոց սլաքը, ավելի թունավոր քան իժի խայթը կխոցոտեն մարդու, չեմ ասում արդեն բովանդակ ազգի սիրտը և Ձեր դարը, որ օվսաննայով գովաբանեցինք, արցունքի մաղթանքներով խնկարկեցինք, ավելի քան հնգապատիկ խոր ցած գցեց ոչ միայն մի դար, այլ տասնյակ դարեր»⁴²:

Այս երկու օրինակները աներկբա ապացույց են, որ «ինքն իրեն և պատմական իսկությունը» հակասում է ոչ թե Բակունցը, այլ Պիոն Հակոբյանը:

Բակունցն իր երկի տողատակում կասկած է հայտնում, որ հայոց կաթողիկոսի ինչ-որ մի գրություն տխուր դեր է կատարել Արովյանի անհայտ բացակայման գործում: Նա գրում է. «Մեզ չհաջողվեց գտնել Աշտարակեցու № 111 գրության պատճենը, որ ինչպես երևում է իր օրագրից, մուծված է եղել Ներսեսի այսպես կոչված «սև դավթարի» այսինքն՝ գաղտնի գրագրությունների մատյանում, որպիսին կոչված է»⁴³: Միայն հիանալ կարելի է Բակունցի խորաթափանց մտքով, քանի որ նրանից հիսուն տարի հետո մեզ հաջողվեց գտնել այդպիսի վավերագիր լինելու հետքերը: Մեղ է հասել փոխ-

³⁸ Տե՛ս Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Արովյանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ, ԱԱ), № 509, էջ 3:

³⁹ ԵՊԺ, հ. 10, էջ 427:

⁴⁰ Տե՛ս Գրական թերթ, 24. IX. 1976:

⁴¹ Պ. Հակոբյան, Խ. Արովյանի անհայտացման հին վարկածի նոր ամենաբանումը (ՀՄՄՀ ԳԱ կրթություն, 1977, № 5, էջ 66—67):

⁴² Դիվան Խ. Արովյանի (այսուհետև՝ Դիվան), կազմեց և ծանոթագրեց Ե. Շահադիո, հ. 2, Երևան, 1948, էջ 52:

⁴³ Ա. Բակունց, Նշվ., աշխ., էջ 87: Հնդգծումը մերն է:

արքայության ուսումնական մասի կառավարիչ Վ. Մ. Սեմյոնովի՝ 1848 թ. մարտի 9-ի № 215 գրությունը, որտեղ նա Աշտարակեցուն գրում է. «Ձերդ սրբազնության մարտի 3-ի № 75 հարգարժանագույն գրության հետևանքով Երևանի գավառական ուսումնարանի հաստիքավոր տեսչի պաշտոնակատար, կոլեգիական ասեսոր Աբովյանին ազատելով այժմ իր զբաղեցրած պաշտոնից և գործուղելով կոլեգիալ քարտուղար Թուրքեստանովին՝ ժամանակավորապես փոխարինելու, դրա հետ միասին Անդրկովկասի ուսումնարանների ղեկավարի պաշտոնակատարի միջոցով կարգադրել եմ Աբովյանին, որպեսզի օրենքի հիման վրա պաշտոնը հանձնի Թուրքեստանովին, անմիջապես ժամանի Թիֆլիս ու ներկայանա Ձերդ սրբազնության տրամադրության տակ»⁴⁴։

Ինչ է պարզում այս գրությունը։ Հայտնի է, որ 1848 թ. հունվարի 5-ին, Աբովյանը առանց վերադասի թույլտվության գնում է Թիֆլիս։ Հունվարի 11-ին, ուսումնարանների ղեկավարը, Կառավարության կողմից ծառայության նշանակման մասին կանոնադրության 1172 հոդվածի հիման վրա (որը սահմանում է՝ առանց ղեկավարության թույլտվության պաշտոնից բացակայողներին, և յոթ օրից ավելի ինքնակամ բացակայության մեջ գտնվողներին հեռացնել ծառայությունից և այլևս ոչ մի տեղ պաշտոնի չնշանակել⁴⁵) Աբովյանին է հանձնում նրան լրիվ կամ խստագույն նկատողություն հայտարարելու հրամանը և առաջարկում անմիջապես մեկնել իր պաշտոնավայրը։ Հրամանը մեզ չի հասել։ Այդ մասին տեղեկացնում է Աբովյանը՝ ուսումնարանների ղեկավարին ուղղված ծառայությունից հրաժարման իր դիմումի մեջ։ Նա գրում է. «Այս անգամ պարտահատույց լինելով լրիվ (вполне) նկատողությամբ, որը պաշտոնից ինքնակամ բացակայելու պատճառով ինձ տվել է ուսումնական մասի պ. կառավարիչը»⁴⁶ և այլն։

Աբովյանի սույն վկայությունն ապացուցում է, որ ուսումնական մասի կառավարիչ Վ. Սեմյոնովը նախքան Աշտարակեցու № 75 գրության հիման վրա մարտի 9-ին Աբովյանին պաշտոնից ազատելը, նրան տվել է լրիվ կամ խստագույն մի նկատողություն, որով Աբովյանին հեռացնում է ծառայությունից՝ այլևս ոչ մի տեղ չնշանակելու պայմանով։ Իսկ ի՞նչ է նշանակում «հեռացնել ծառայությունից և այլևս ոչ մի տեղ չնշանակել»՝ ձևակերպումը։ Խնդրին այն է, որ Աբովյանի օրոք Կառավարության կողմից ծառայության նշանակման մասին հրապարակային կանոնադրությունից բացի գործում էր նաև 1837 թ. նոյեմբերի 26-ին Պետական խորհրդի ընդունած գաղափարավորական ակտը՝ «Կանոնադրություն ծառայության իրավունքը կորցրած զինվորական և քաղաքացիական պսակտոնաթող աստիճանավորների մասին»։ Այդ կանոնադրությանը կից ներքին գործերի մինիստրի նախագծում բացատրվում է, թե քանի որ հսկայածավալ Ռուսական կայսրության մեջ աստիճանավորների խիստ կարիք է զգացվում, ապա ամեն մի օրենքի խախտման համար նրանց չպետք է ծառայությունից անմիջապես հեռացնել։ Այդպիսիների նկատմամբ պետք է կիրառել նախազգուշական մի քանի պատիժներ, ուղղվելու ժամկետ տալ, և եթե այդ էլ ապարդյուն անցնի, ապա նրանց պաշտոնաթող անելով՝ ծառայությունից մեկուսացնել կամ հեռացնել⁴⁷։

Մեր ուսումնասիրություններում և հատկապես Աբովյանի «Նախաշափիղի» ապօրինի հրատարակման առիթով լուսավորության մինիստրության ղեկավարամենտում բացված № 42 «Գործի» պատմությունը լուսաբանող ծավալուն հոդվածի մեջ նշել ենք, որ դրա կապակցությամբ Աբովյանին Թիֆլիսից Երևան փոխադրելը իշխանությունները դիտել են որպես նրա ուղղման ժամկետ⁴⁸։ Վերև էլ նշեցինք, որ 1846 թ. փոխարքան Աբովյանին տալիս է

⁴⁴ Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 126, վավ. 399, թ. 18։

⁴⁵ СЗРИ, т. 3, ч. 3, кн. I, СПб., 1842, статья 1172.

⁴⁶ ԳԱԹ, ԱԱ, № 509, էջ 3։

⁴⁷ Sб'у Центральный гос. военносторический архив (այսուհետև՝ ЦГВИА), ф. 29, оп. 6, д. 6, л. 1—9.

⁴⁸ Sб'у Վ. Ղ ա զ ա ր յ ա ն, Խաչատուր Աբովյանի «Գործը» (Բանբեր Հայաստանի արխիվներ, 1974, № 3, էջ 45)։

խիստ նկատողություն և երեքօրյա տնային կալանք: Ահա այդ պատիժներից հետո Վ. Սեմյոնովի կողմից Արովյանին տրված լրիվ կամ խստագույն նկատողությունը և դրան հաջորդած պաշտոնանկությունը նշանակում են, որ Սեմյոնովը, ճշտությամբ առաջնորդվելով գաղտնի կանոնադրության սահմանումներով, Արովյանին, որպես ուղղման ժամկետում չարգարացնողի, հունվարի 11-ին տալիս է «լրիվ նկատողություն» և համարում ծառայությունից մեկուսացված, իսկ Աշտարակեցու № 75 գրության հիման վրա Աբովյանին նաև պաշտոնաթող է անում:

Այսպիսով, պարզվում է, որ 1848 թ. հունվարին Արովյանին տրված լրիվ նկատողությամբ Կովկասի վերադաս իշխանություններն արդեն վճռել էին Աբովյանի անհայտ բացակայման խնդիրը և մնում էր միայն ձերբակալումն ու նրան պատկանող ունեցվածքը պետական հսկողության տակ առնելը: Քանի որ այդ ամենն արվում էր ծառայության իրավունքը կորցրած պաշտոնաթող աստիճանավորների մասին գաղտնի կանոնադրության ուժով, հասկանալի է, որ պետք է իրականացվեր գաղտնի, ուստի Թիֆլիսում, ըստ երևույթին, միտք է ծագում Աբովյանի ձերբակալումն ու արքային իրագործել Նրևանից Թիֆլիս տանող ճանապարհին, այսինքն, ճիշտ այնպես, ինչպես 1850 թ. նրանք վարվեցին Թիֆլիսից Վոլինսկու գավառ մեկնած Դուշեթի գավառական ուսումնարանի նախկին տեսուչ Պյոտր Սլավինսկու հետ⁴⁹: Այդ նպատակով էլ մեջտեղ է գալիս Արովյանին ներսիսյան դպրոց հրավիրելու հարցը:

Իսկապես, 1848 թ. փետրվարի 21-ին, ներսես Աշտարակեցին, Բակունցի հիշատակած № 111 գրությամբ Արովյանին շտապ Թիֆլիս է հրավիրում: Աբովյանը, քաջածանոթ լինելով ընդունված կարգ ու կանոնին, կասկածում և չի շտապում Թիֆլիս մեկնել: Միայն մարտի 6-ին ուսումնարանների դիրեկտորին է ուղարկում հետևյալ դիմումը. «Սույն ձմռանը Թիֆլիսում գտնվելու ժամանակ պատիվ ունեցա զեկուցելու ինչպես նորին գերազանցություն ուսումնական մասի պ. կառավարչին, այնպես էլ ձերդ բարձր բարեօնությանը ամենայն հայոց կաթողիկոսի մտադրության մասին՝ ինձ Թիֆլիսի հայկական հոգևոր սեմինարիայում նշանակելու վերաբերյալ: Այժմ նորին սրբազնությունը անցյալ փետրվարի 21-ի № 111-ով գրում է ինձ, որ հանրավորին չափ շտապ ներկայանամ իրեն, որի համար էլ խնդրում եմ ձերդ բարձր բարեօնությանը բարեհաճել անելու Ձեր վերադաս կարգադրությունը ուսումնական գերատեսչությունից ինձ ազատելու և որևէ մեկին իմ տեղը նշանակելու, որպեսզի պաշտոնն ու պետական գույքը նրան հանձնեմ»⁵⁰:

Կարծում ենք պարզ է, որ իրեն ուսումնական գերատեսչությունից ազատելու՝ Աբովյանի այս դիմումը իշխանությունների համար այլևս ոչ մի արժեք չունի, քանի որ նրանք դրանից երկու ամիս առաջ էին Աբովյանին հեռացրել ծառայությունից: Այդ է պատճառը, որ Վ. Սեմյոնովը Աշտարակեցուն գրում է, թե ինքը Արովյանին պաշտոնաթող է անում ոչ թե իր դիմումի համաձայն, այլ կաթողիկոսի № 75 «հարգարժանագույն գրության» հիման վրա: Նույնը վկայում է նաև ուսումնարանների դիրեկտոր Ռոսկովչենկոն: Նա Աբովյանին հաղորդում է, թե Վ. Սեմյոնովը, կաթողիկոսի գրության համաձայն նրան ազատելով պաշտոնից ու ծառայությունից, իրեն կարգադրել է Թուրքեստանովին որպես փոխարինող գործուղել Նրևան: Դրա հիման վրա Ռոսկովչենկոն Աբովյանին կարգադրում է պաշտոնն ու պետական գույքը Թուրքեստանովին հանձնելուց անմիջապես հետո մեկնել Թիֆլիս և ներկայանալ ներսես Աշտարակեցուն⁵¹: Որ Ռոսկովչենկոյի այդ գրությունը խաբկանք է, ապացուցում են հետևյալ փաստերը: Նախ, Վ. Սեմյոնովը կաթողիկոսի գրության հիման վրա Արովյանին ազատել է միայն պաշտոնից և ոչ թե նաև ծառայությունից: Բացի այդ, Կառավարության կողմից ծառայության

⁴⁹ ՏՃՍ Կենտրոնականի ց. исторический архив СССР (այսուհետև՝ ԿԻԱ), ֆ. 733, օպ. 82, Լ. 119, Լ. 1—2, 6—7.

⁵⁰ ՆԳԿԱ, ֆ. 1, ց. 1, գ. 272, ք. 30:

⁵¹ ՏՃՍ նույն տեղում, ք. 31—32:

նշանակման մասին կանոնադրության 1395 հոդվածը սահմանում է. «Увольняемый в отставку или для определения к другим делам, снабжается при самом увольнении для свободного везде прожития безсрочным паспортом или аттестатом»⁵². Հարկ է միայն բացատրել, որ հոդվածով սահմանված՝ կայսրության ցանկացած վայրում ազատ ապրելու իրավունք տվող անժամկետ անձնագիր կամ վկայագիր (ատեստատ) տրվում էր միայն նրանց, որոնց պետերը հավաստում էին, որ նրանք ծառայությունը կատարել են անբասիր, ուստի պաշտոնաթողության կամ այլ գործի են անցնում իրենց դիմումի համաձայն: Իսկ մեզ հայտնի է, որ Աբովյանի պետերը նրա ծառայությունը անբասիր չեն համարել, քանի որ նրա առաջադիմական ամբողջ գործունեությունը լի էր ցարական կաշկանդիչ օրենքների ու կայսրականների խախտումներով, ուստի և նրա պաշտոնանկությունն ու ծառայությունից հեռացնելը տեղի է ունեցել վերադասի կարգադրությամբ:

Ռոսկովչենկոյի դավադիր գրությունը Աբովյանը ստանում է մարտի 15-ին, այդ օրվանից էլ նա ընկնում է մտատանջության մեջ: Կինը՝ էմիլիա Աբովյանը, Երևանի ոստիկանապետի հարցման պատասխանում վկայում է. «...ես նրա մոտ նկատել եմ մեծ փոփոխություններ և մի ինչ-որ թախիծ ու տանջանք, մանավանդ այն ժամանակից ի վեր, երբ նա իր փոխադրության մասին թուղթ էր ստացել, և ինքն էլ ասում էր, թե ցավում է, որ որոշել է իր ծառայության բնույթը փոխել»⁵³: Այն փաստը, որ Ռոսկովչենկոն իբր պտտոնից և ծառայությունից ազատվան ծանուցագրի հետ միաժամանակ չի ուղարկել նաև ազատ ապրելու իրավունք վերապահող և «ազատման իսկ ժամանակ» տրվող վկայագիրը, Աբովյանին պարզ է դարձրել, որ իրեն չեն ատեստավորել: Ուստի և ինքն իրավունք չունի ցանկացած վայրում ազատ ապրելու: Ահա թե ինչու է նրա կինը Քիֆլիս տեղափոխվելու գրությունը ստանալուց հետո ամուսնու մեջ մեծ փոփոխություններ նկատել: Հետագա դեպքերը ցույց տվին, որ Աբովյանի կուսումը ճիշտ էր:

Մարտի 30-ին Երևան է ժամանում Թուրքեստանովը, և այդ օրվանից մինչև ապրիլի 1-ի գիշերը Աբովյանը ենթարկվում է երեքօրյա տնային կալանքի, իսկ ապրիլի 2-ի առավոտյան գավառապետ Բլավատսկին փոխարքային ուղարկած իր հայտարարությամբ հավաստում է Երևան քաղաքից Աբովյանի անհայտ բացակայումը: Այդ նույն առավոտյան գավառական դատարանը ձևակերպում է համաքաղաքացի հաշատուր Իսկանդարովին փոխարինաբար Աբովյանի տված հազար ռուբլու գրավագրումը, որով էլ սկիզբ է դրվում վերջինիս պատկանող ունեցվածքը պետական հսկողության տակ առնելուն: Իսկ Քիֆլիսում էլ, այդ նույն օրը, առանց Աբովյանի անհայտացման մասին որևէ լուր ստանալու, նրա հաստիքում նշանակում են հարկովի նահանգի Լեբեդինսկի գավառի Ախտիրսկ գյուղում ապրող կուլգիական ասեսոր Ֆեոդոր Իվանովիչ Սիմոնովին, նախօրոք իրենց ձեռքին ունենալով նրա՝ ծառայությունից ազատման № 92 վկայագիրը⁵⁴: Այս բոլորը խոսում են այն մասին, որ Աբովյանի անհայտ բացակայումը կամ վարչականորեն գաղտնի արտոք տեղի է ունեցել Քիֆլիսում խնամքով մշակված ծրագրով:

Իսկ թե ո՞ր արքայազանն են ուղարկել Աբովյանին, կարելի է պարզել 1837 թ. գաղտնի կանոնադրության և նրա ընտանիքին միանվագ նպաստ տալու գործերի միջոցով: Խնդիրն այն է, որ գաղտնի կանոնադրության առաջին բաժնի առաջին պարագրաֆով ծառայությունից հեռացվածները բաժանվում են երեք կարգի: Առաջին երկուսը վերաբերում են զինծառայողներին, իսկ երրորդը կոչվում է «Այսուհետև նշանակման ոչ ենթակա՝ ծառայությունից մեկուսացվածներ կամ հեռացվածներ»⁵⁵: Նույն բաժնի չորրորդ պարագրաֆով սահմանվում է, որ առաջին երկու կարգերին պատկանող անձինք նորից

⁵² СЗРИ, т. 3, кн. 1, ч. 3, статья 1395.


⁵³ Դիվան, հ. 2, էջ 267.

⁵⁴ Տե՛ս 2944Ա, ֆ. 1, ց. 1, գ. 272, թ. 69.

⁵⁵ ЦГВИА, ф. 29, оп. 6, д. 6, л. 3.

ծառայության մեջ ընդունվելու դեպքում նշանակվում են իրենց ցանկությամբ և տեղի ղեկավարության համաձայնությամբ, իսկ երրորդ կարգին պատկանող անձանց նշանակում են միայն մայրաքաղաքից հեռու՝ Սիբիրի, Արիանգիսկի, Աստրախանի, Օրենբուրգի, Պերմի նահանգներում, Վրաստանում և Կովկասյան մարզում⁵⁶։ Ըստ որում, վեցերորդ պարագրաֆով էլ սահմանվում է, որ «երկրորդ և երրորդ կարգերին պատկանող անձանց ծառայությունը թոշակ նշանակելիս հաշվի է առնվում միայն նոր ծառայության նշանակման ժամանակից»⁵⁷։

Վաղուց է հայտնի, որ Աբովյանի անհայտ բացակայման գաղտնիությունը պահպանելու նպատակով, փոխարքան, զանազան պատճառաբանություններով, մի քանի տարի մերժում է Աբովյանի ընտանիքին թոշակ տալու վերաբերյալ էմիլիայի դիմումները։ Բայց 1853 թ. մարտի 15-ին Վորոնցովն ինքն է հարց բարձրացնում Աբովյանի ընտանիքին ոչ թե թոշակ, այլ միանվագ նպաստ տալու համար⁵⁸։ Կարծում ենք, պարզ է, որ Վորոնցովի հիմքը գաղտնի կանոնադրության 6-րդ պարագրաֆով սահմանված արքայազնությունում Աբովյանի աշխատանքային հնգամյա նոր ստաժն էր։ Փոխարքայի կարգադրության հիման վրա էմիլիայից նոր դիմում վերցնելով, Կոկկասի վերագաս իշխանությունները պատրաստում են Աբովյանի ընտանիքին միանվագ նպաստ տալու գործը, որտեղ, ի թիվս թոշակների մասին օրենսգրքի այլ հոդվածների, վկայակոչվում է նաև զուտ Սիբիրում ծառայողներին վերաբերող 282 հոդվածը, որով էլ ապացուցվում է, որ Աբովյանը արքունիկ է Սիբիր⁵⁹։ Բացի այդ, Աբովյանի ընտանիքին նպաստ տալու իրավունքը հաստատելու համար իշխանությունները գործի մեջ պետք է ներկայացնեին երեք փաստաթղթերից միայն մեկը՝ ամուսնու կամ հոր ծառայությունից ազատման վկայագիրը, նրա մահվան վկայականը կամ նրա ծառայության ցու-



նկ. 2. Աբովյանի 1853 թ. ծառայության ցուցակը (ՀՊԿԱ, ֆ. 19, ց. 2, գ. 26, թ. 6)։

ցակը⁶⁰։ Իշխանությունները ներկայացնում են Աբովյանի 1853 թ. ծառայության ցուցակը (նկ. 2), որի առկայությունն ինքնին ապացույց է, որ այդ թվականին Աբովյանը ոչ մահացած էր և ոչ էլ ծառայությունից ազատված

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 4։

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 4ա։

⁵⁸ Տե՛ս ՀՊԿԱ, ֆ. 19, ց. 2, գ. 26, թ. 1—2։

⁵⁹ Մանրամասնությունները տե՛ս Վ. Ղաղարյան, Խաչատուր Աբովյան, էջ 260—274։

⁶⁰ СЗРИ, т. 3, кн. 3, Устав о пенсиях и единовременных пособиях. СПб, 1842, статья 156.

ու առևտրափոխանակման, այլ դեռևս ծառայության մեջ էր գտնվում: Դա սարգ է նաև այն պատճառով, որ եթե նա ողջ չլիներ և հնգամյա նոր ստաժ չհավաքեր, ապա նրա ընտանիքին ոչինչ չէր հասնի, քանի որ Աբովյանի Կովկասում հավաքած 11-ամյա ծառայությունը անբասիր ու ջանադիր չի համարվել, ուստի և արժանի չի եղել պարգևի շարքը դասվող թոշակ կամ նպաստ ստանալու համար: Չէ՞ որ հենց դա էր այն հիմնական պատճառը, որ տարիներ շարունակ Վորոնցովը մերժում էր էմիլիա Աբովյանի դիմումները:

Մեր ուսումնասիրություններում վաղուց հրատարակված այս բոլոր նյութերը ծանոթ են Հակոբյանին: Ավելին, մենք նրա մատնանշած հետքերով ենք հայտնաբերել Աբովյանի «Նախաշավիղի» ապօրինի հրատարակման փորձի առիթով Երրորդ բաժանմունքի պետ Ա. Բենկենդորֆի կարգադրությամբ Լուսավորության մինիստրությունում ստեղծված № 42 «Գործը», որով էլ փաստորեն հիմք է դրվում Աբովյանի հետապնդմանը և ի վերջո անհայտ բացակայմանը: Այդ «Գործին» Հակոբյանը ծանոթացել է դեռևս 1955 թ.⁶¹ Բայց, Աբովյանի օրոք գործող օրենքներին և կարգ ու կանոններին հասու չլինելու պատճառով, նա չի ըմբռնել գործի էությունը և մինչև այսօր ոչ հրատարակել և ոչ էլ գիտական մեկնաբանություն է տվել դրան: Այդ «Գործին» իր մեկնաբանություններով հանդերձ հրատարակել ենք 1974 թ., այսինքն, Բակունցի խնդրո առարկա երկը Հակոբյանի ծանոթագրելուց տասը տարի առաջ, որին նա անդրադարձել է ԳԱ կրթչի 1977 թ. 5-րդ համարում⁶²: Սակայն մեր հոգվածին տված իր սխալ մեկնաբանությունները թաքցնելու նպատակով «Նախաշավիղի» առթիվ տված 96 և 119 ծանոթագրություններում⁶³ Հակոբյանը ոչ միայն մեր, այլև իր իսկ հոգվածի մասին բառ անգամ չի նշում: Որովհետև 1853 թ. Աբովյանի ողջ լինելու իրողությունը ժխտելու համար, առանց որևէ աղբյուրի հղման, նա հայտարարում է. «Տեղական իշխանությունների համար Աբովյանը թեև անհայտ կորած, բայց 1848 թ. արդեն մահացած մարդ էր, ուստի և՛ անմտություն է 1853 թ. նրան Սիբիրում բռնելը: Քանի դեռ անհայտ կորստի գաղտնիքը չէր պարզված, նա կենդանի էր համարվում: Այս դեպքում 1848 թ. ապրիլին 38 տարեկանում կորած Աբովյանը 1853 թ. ապրիլին պետք է 43 տարեկան լիներ»⁶⁴: Ըստ Հակոբյանի ստացվում է, որ տեղական նույն իշխանությունների համար Աբովյանը 1848 թ. համարվել է մահացած, իսկ 1853 թ.՝ ողջ մարդ: Չէ՞ որ անմտություն չենք դա է: Բացի այդ, եթե Աբովյանը 1848 թ. 38 տարեկան էր, իսկ 1853 թ. էլ 43 տարեկան, ապա ինչպե՞ս է Հակոբյանը նրա ծննդյան թվականը մինչև այսօր 1809-ը համարում, չէ՞ որ 1848-ից հանած 38 և 1853-ից հանած 43 բոլոր դեպքերում 1810 է և ոչ թե 1809:

Այսպիսով, հակառակ Հակոբյանի հայտարարությունների, նա մանրամասնորեն զբաղվել է «Բակունցի վարկածի վերաքննությամբ»: Բայց քանի որ նրա մտահոգության միակ առարկան Բակունցի տաղանդավոր կուսհումներն ապացուցող մեր հետազոտություններին խանգարելն է, այդ պատճառով էլ չի թաքանում նոխազ է դարձել Ակսել Բակունցին: Իսկ դա ոչ միայն գիտական մոտեցում չէ, այլև անպատշաճ, երբ հանգուցյալին վերագրվում են այնպիսի մեղքեր, որոնք նա չի կատարել:

61 ЦГИА СССР, ф. 733, оп. 82, д. 42, лист использования документов.

62 Տե՛ս վ. Ղազարյան, Խաչատուր Աբովյանի «Գործը», էջ 39—74, Պ. Հակոբյան, Խ. Աբովյանի անհայտացման հին վարկածի նոր մեկնաբանումը, էջ 61—86:

63 Տե՛ս Ա. Բակունց, նշվ. աշխ., էջ 556, ծան. 96, էջ 561, ծան. 119:

64 Պ. Հակոբյան, Խ. Աբովյանի անհայտացման հին վարկածի նոր մեկնաբանումը (ՀՍՍՀ ԳԱ կրթչի, 1977, № 5, էջ 84):

КОГДА ДОРОГА ВЕДЕТ В ТУПИК

В. ДЖ. ГАЗАРЯН

Р е з ю м е

В IV томе сочинений А. Бакунца помещено исследование писателя «Безвестное отсутствие» Хачатура Абовяна». Бакунц утверждал, что после исчезновения Абовян был жив. Наши исследования выявили, что под юридическим термином «безвестно отсутствующий» подразумевается лицо, тайно сосланное в административном порядке.

В своих изысканиях, исходя из версии исследователя прошлого века священника Н. Тер-Карапетяна о так называемом «убийстве турком» Абовяна, П. Акопян оказался в тупике.

В комментариях к сочинению Бакунца П. Акопян пытается бросить тень на это ценное исследование путем искажения исторических фактов, укрытия от читателя имеющейся литературы, подтверждающей точку зрения Бакунца.

WHEN THE PATH ENDS IN A DEADLOCK

V. J. GAZARIAN

S u m m a r y

In the IV volume of the works by A. Bakunts there is a study by the author „The unexplained disappearance of Khachatur Abovian“ Bakunts alledged that after his disappearance Abovian had been alive. Our studies have shown that the legal term „unexplained disappearance“ indicates a person secretly exiled by the order of the administration.

In his research based on the version of the last century scholar priest N. Ter-Karapetian on the so-called “assasination by a Turk“ of Abovian, P. Akopian finds himself in a deadlock.

In the commentary to the work by Bakunts P. Akoplan is trying to cast a shadow on this valuable piece of research by manipulating the historical facts, concealing from the reader the available literature supporting the view held by Bekunts.